

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 186

Մինչ այժմ նկատի առնելով կարեւոր հիմնական ուսուցումներ սրբագործութեան վարդապետութեան վերաբերեալ, մենք հիմա կարող ենք մեր ուշադրութիւնը դարձնել մի շատ խորհմաստ հատուածին՝ Քրիստոնէայի մեղքի դէմ եղած պայքարի վերաբերեալ՝ որն է Հռովմայեցիս 7:14-25ը:

Ո՛վ է այն մարդը Հռովմայեցիս 7:14-25ում – Այս ամբողջ Հռովմայեցիս գրքում ամենաշատ վիճաբանուած բաժիններից մէկն է: Հաշի առնելով Պօղոսի գործածուած խիստ ուժգին ու թշուառ լեզուն նկարագրելով մեղքի դէմ եղած պայքարը, Քրիստոնէաների մեծամասնութիւնը համարում են այս որպէս Պօղոսի մեղքի դէմ եղած իր ներքին պայքարի նկարագրութիւնը նախքան իր փրկութիւնը: Սակայն, այսպէս մեկնաբանութիւնը Աստուածաշնչի ուսուցման ուղղակի հակառակն է: Իրականում, այս հատուածը Պօղոսի իր Քրիստոնէայ կեանքի, ու իր կենսատես եւ խորունկ մեղքի դէմ եղած պայքարի նկարագրութիւնն է: Մենք նկատում ենք 14րդ համարում որ Պօղոսը կոչում է Աստուծոյ օրէնքը որպէս հոգեւոր, եւ ապա 16րդ համարում ասում է որ նա համաձայն է օրէնքի հետ, թէ այն բարի է: Նա 22րդ համարում ասում է որ նա հաւանում է Աստուծոյ օրէնքին: Եւ 15, 18-21, ու 25րդ համարներում նա խօսում է մի փափաքի մասին որ կամենում է անել այն ինչ որ ճիշտ ու բարի է, մի ցանկութիւն հնազանդելու Աստուծոյ օրէնքին:

Սակայն, ինչպէս Պօղոսը ասել է բազմաթիւ տեղերում, այս չի նկարագրում մի ոչ հաւատացեալին. քանի որ մեղաւոր մարդը, ոչ վերածնուածը, ոչ հաւատացեալը, չի որոնում Աստուծուն, Աստուծոյ թշնամին է, ատում է Աստուծոյ ճշմարտութիւնը, ճնշում է այն, չի հնազանդում Աստուծոյ օրէնքին, ոչ էլ կարող է այդ անել, ու չի կարող հաճեցնել Աստուծուն (Հռովմայեցիս 1:18, 3:10-12, 8:5-8, Եփեսացիս 2:1-3): Ոչ վերածնուածները չեն պատերազմում մեղքի դէմ այլ միայն մեղքի հետեւանքների դէմ՝ բռնել, խայտառակել, ու պատժել իրենց մեղքերի համար: Այս մեղքի դէմ եղած հոգեւոր պայքարը միմիայն սկսում է երբ մարդը դառնում է Քրիստոնէայ: Եւ թէպէտ մեղքի իշխանութիւնն ու զօրութիւնը կտորւել են, սակայն մեղքը մնում է եւ պայքարում է հաւատացեալի հետ իր Քրիստոնէայ կեանքի իւրաքանչիւր քայլափոխում: Իրականում, ինչքան աւելի մի Քրիստոնէայ աճի իր սրբագործութեան մէջ առաւել նա կ'գիտակցի թէ որքան նա հեռու է Աստուծուն կատարելապէս հնազանդելուց: Ինչքան որ մենք աճենք սրբութեանը մէջ, եւ ինչքան որ մենք հասկանանք Աստուծոյ նկարագիրը, դեռ աւելի կ'տեսնենք մեր մեղաւորութիւնը, եւ աւելի խստօրէն կ'զգանք մեր կեանքում եղած մեղքի ներկայութիւնը, զգանքը, ու մթութիւնը: Այս է այն ինչ որ Պօղոսն է ասում 14րդ համարում երբ նա ասում է թէ՛ «ես եմ մարմնաւոր՝ մեղքի տակ ծախուած»: Նա 15-19րդ համարներում տեսնում է մի դաժան կռիւ իր կեանքումը, բայց չի կարող բացատրել այն: Նա շփոթուած է այդ իրողութեամբ որ նա ուզում է անել այն ինչը որը համապատասխան է իր նոր ցանկութիւններին, իսկ փոխարէն անում է այն ինչը որը նա ատում է, որը համապատասխան է իր հին ցանկութիւններին: Պօղոսը չ'ունէր որեւէ այսպիսի պայքար նախքան իր դարձումը (Փիլիպպեցիս 3:5-6):

Նա 20րդ համարում չի արդարացնում իր մեղքը կամ ասում թէ մի բան նրանից դուրս ստիպեց նրան մեղանչել իր կամքի հակառակ, եւ այդպիսով մերժում է որեւէ անձնական պատասխանատուութիւն իր արարքների համար: Ոչ էլ նա հաստատում է մի Յունական երկբանութիւն որը ուսուցանում է թէ հոգին բարի է իսկ ֆիզիքական մարմինը վատ: Իսկ, նա գիտէր որ երբ նա մեղանչեց նա վարում էր հակառակ այն ինչին որը իրականում էր ի Քրիստոս իր նոր ինքնութեան (Հռովմայեցիս 6:4-6): Այս խառնաշփոթման ու անյաջողութեան էր մատնել նրան. եւ թէպէտ նա մեղանչեց, սակայն այդ հիասթափելի ու զգուշ էր նրան:

Պօղոսը 21-23րդ համարներում խօսում է երկու օրէնքների մասին, որն պայքարի մէջ են իրենում՝ մեղաւոր սկզբունքի ու հոգեւոր սկզբունքի միջեւ եղած պատերազմը, հին մարդու եւ նոր մարդու միջեւ, արտաքին մարդու եւ ներքին մարդու միջեւ. եւ այս ամենը կատարում են հենց նրա մէջ: Նա 24րդ համարում ողբում է մեղքի վրայ եղած իր թշուառութիւնն ու վիշտը՝ մնացած պիղծ բնութեան սարսափելիութիւնը, որը մղում է նրան մեղանչելու: Նա սպասում է, անհամբեր յուսալով այն օրան երբ նա կ'ազատի մեղաւոր բնութիւնից: Այս մի կործանման ու վիատութիւն անյոյս աղաղակը չի, քանի որ հենց յաջորդ համարում նա տալիս է իր հարցի պատասխանը, եւ այդ պատասխանն է Յիսուս Քրիստոս, որը մի օր կ'ազատի իրեն լիովին ու վերջապէս մեղքի ներկայութիւնից ու պայքարից (Հռովմայեցիս 8.23; 1 Կորնթացիներ 15: 52-57, Փիլիպպեցիս 3:20-21):

Ապա 25րդ համարով ամփոփում է Քրիստոնէական կեանքը՝ ուր նոր մարդ ցանկանում եւ ծառայում է Աստուծուն, իսկ մնացած ընկած բնոյթը ցանկանում ու ծառայում է մեղքին: Այս մի ոչ հաւատացեալի պատմութիւնը չի, այլ մի հաւատացեալի, այդ էլ Պօղոսի առաքելապետութիւնը: Այս մի խիստ իրական, անձնական ու բուռն պայքարի սրտածմիկ պատմութիւնն է, որը տալիս է մեզ չափազանց միախառնութիւն ու յոյս. ոչ որովհետեւ մենք ուզում ենք մեղանչել, կամ ուզում ենք արդարացնել մեր մեղքը. Այլ, որովհետեւ մենք տեսնում ենք որ նոյնիսկ հաւատքի մեծագոյն հերոսներից մէկը ունէր նոյն պայքարը ինչպէս մենք: Այս ակնթարթային յաղթանակի կամ կատարելականութեան մի պատմութիւն չի. փոխարէն, այս մի շարունակական պատերազմի պատմութիւն է՝ այս կեանքում եղած իր յաջողութիւններով ու ձախողումներով, բայց նաեւ գալիք կեանքի վերջնական յաղթանակի պատմութիւն: